

**ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / 202 թ.**

<<ՍԹԱՐ ՍԵՐՎ>> ՍՊԸ-ի, այսուհետև՝ <<Կատարող>>, որը գործակալական պայմանագրով հանդես է գալիս որպես 1.2.1 կետում նշված հյուրանոցի (հանգստյան տան) անուկնից

(Գործակալ) և \_\_\_\_\_, այսուհետև՝ <<Պատվիրատու>> մյուս կողմից, որոնք սույն պայմանագրում համարվում են կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, այսուհետև Ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Սույն պայմանագրով մատուցվող ծառայություններից օգտվելու են՝ \_\_\_\_\_ Պատվիրատուն և/կամ ընտանիքի \_\_\_\_\_ անդամ(ներ)

**1.2 Մատուցվող ծառայությունները ներառում են՝**

1.2.1 \_\_\_\_\_ ( հյուրանոցի / հանգստյան տան / անվանումը, իրավաբանական հասցեն, գտնվելու վայրը, փաթեթում առաջարկվող երթուղին)

1.2.2 \_\_\_\_\_ ( առաջարկվող ծառայությունների հնարավոր ժամանակահատվածը )

1.2.3 Տրանսպորտ՝ \_\_\_\_\_ միակողմանի \_\_\_\_\_ երկկողմանի Տեսակը \_\_\_\_\_ 1.2.4 Մուտնդ՝ \_\_\_\_\_

1.2.5 \_\_\_\_\_ ( այլ ծառայություններ )

**2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

**2.1 Կատարողը պարտավոր է՝**

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանավորված ժամկետներում՝ համաձայն պայմանագրի:

**2.2 Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1 Մատուցված ծառայության համար պահանջել 3.1 կետում նշված գումարը:

2.2.2 Չմատուցել 1.2 կետում նշված ծառայությունները, եթե Պատվիրատուն չի վճարում 3.2 կետում նշված գումարը՝ սույն պայմանագրի համապատասխան:

**2.3 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.3.1 Զբոսաշրջության ( հանգստի ) մեկնումից 15 օրացույցային օր առաջ տեղեկացնել Կատարողին ընտրված հանգստավայրի մասին , կատարողի կողմից պատվիրատուի պատվերով՝ ընտրված հանգստավայրում ամրագրում կատարելու համար:

2.3.2 Ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, չվնասել գույքը , հետեմել տվյալ վայրի ներքին կանոնակարգին և պահանջներին:

**2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.4.1 Ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,

2.4.2 Կատարողի հետ փոխադարձ համաձայնությամբ փոփոխել 1.2 կետում նշված ծառայությունների ցանկը և դրանց կատարման ժամկետները:

2.4.3 Իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ ամբողջական տեղեկատվություն զբոսաշրջային ծառայության մասին:

2.4.4 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում եթե երկկողմ բանակցությունները անարդյունավետ ավարտ են ունեցել:

**3. Պայմանագրի գինը 7 հաշվարկման կարգ**

3.1 Սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված մատուցվող ծառայությունների գինը կազմում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ,

որից հյուրանոցի մեկ օրվա գինը \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ, այլ ծառայություններ \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ,

ներառյալ հարկերը: Գնի մեջ ներառված է հյուրանոցային տնտեսության և միջնորդային ծառայության արժեքները՝ ներառյալ հարկային պարտավորությունները:

3.2 Սույն պայմանագիրը կնքելուց հետո՝ հիևց աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողին փոխանցում է կանխավճար՝ Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվին առկա գումարի չափով, իսկ պայմանագրի գնի մնացած հերթական վճարումները՝ ոչ ուշ քան Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվին գումարը մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, եթե սույն պայմանագրի 3.1 կետով ամրագրված գինն ավելի է քան սոցիալական փաթեթով հասկանալի գումարի սահմանաչափը, ապա պատվիրատուն գնի տարբերությունը վճարում է սեփական միջոցներին հնարավոր է պատճառով սոցիալական փաթեթով նախատեսված գումարների փոխանցումների ընդհատման դեպքում ընդհատումից առաջացող գումարի պակասորդ մասը պատվիրատուն պարտավոր է վճարել սեփական միջոցներին

**ընդհատումից հետո տասնօրյա ժամկետում:**

3.3 Սույն պայմանագիրը ստորագրելով Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը Կատարողի կողմից համապատասխան բանկ սույն պայմանագրի գնի ստացման պահանջագիր ներկայացնելու և բանկի կողմից Պատվիրատուր սոցիալական փաթեթի հաշվից անակցեպտ ձևով սույն պայմանագրի գնի գանձման և Կատարողի հաշվին փոխանցելու համար:

3.4 Պատվիրատուի կողմից վճարված գումարները ենթակա չեն վերադարձման՝

ա) 25%-ի չափով, եթե Պատվիրատուն 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվել է ոչ ուշ, քան ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից 2 աշխատանքային օր առաջ:

բ) 50 %-ի չափով, եթե Պատվիրատուն 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվել է ա) ենթակետում նշված ժամկետի խախտմամբ կամ ընդհանրապես չի օգտվել:

1.2 կետում նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը զբոսաշրջային օպերատորին՝ սպասողի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1 Կատարողի՝ օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, այդ թվում իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ( Ֆորս մաժոր )**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը վավերացնելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Սույն պայմանագրով ծագած վեճերը լուծվում են բանակցություններով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Եզրափակիչ դրույթներ**

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմեր պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2 Հյուրանոցային, տրանսպորտային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և ( կամ ) անձանց կողմից ( ծառայությունների մատակարարների ) , որոնց հետ Կատարողն ունի համապատասխան պայմանագրեր: Հյուրանոցային, հանգստյան տան, առողջարանային ծառայությունների մատուցման ժամանակ Կատարողը հանդես է գալիս , որպես

1.2.1 կետում նշված հյուրանոցի ( հանգստյան տան , առողջարանի ) անուկնից ՝ որպես գործակալ:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից , որոնցից մեկական օրինակը տրվում է պայմանագրի կողմերին:

7.4 Սույն պայմանագրով Կատարողի համար պարտականություններն առաջանում են սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված կանխավճարի փոխանցումից հետո:

**Կանխավճարային փոխանցման հաշիվ**

Ծառայություն մատուցող՝ << ՍԹԱՐ ՍԵՐՎ >> ՍՊԸ , Իրավ. Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր 2որ. Անդրանիկի 3-րդ նրբ տուն 3		N
Հ/Հ 2471707956180000 Բանկ՝ ԱՐԴԵԻՆԲԱՆԿ ՓԲԸ ՀՎՀՀ 06928973		
Գործունեության. Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Գ. Լժդեհի 9/2-1, հեռ + (374) 98272737 Էլ. Փոստ www.Starserv0.wixsite.com Էլ հասցե star_serv@mail.ru		
Պատվիրատուի անուն, ազգանուն, հայրանուն	Անձնագրի սերիա, համար, ում կողմից է տրված, տրման ամսաթիվ	Հեռախոս
Պատվիրատուի հաշվառման հասցեն		Պատվիրատուի աշխատավայրը
Պայմանագրի գումարը ( ծառայությունների փաթեթի ընդհանուր արժեքը ) _____ ( _____ ) ՀՀ դրամ		

**8. Կողմերի ստորագրությունները**

Կատարող՝ « ՍԹԱՐ ՍԵՐՎ » ՍՊԸ

Պատվիրատու

Տնօրեն \_\_\_\_\_ Վահե Զալաչյան  
/ստորագրություն/

\_\_\_\_\_  
/ստորագրություն/